

## ԴՐՈՒՅԱԿԱՆ ԱՌՈՂՋԱԿԱՎԱՀՈՒԹԻՒՆ

(Եար. Բագ. Էջ 207)

Սոյն զրութեանս վրայ Ռւսումսական Խորհուրդն անմիջապէս փութաց առաջարկութիւն ընդունիլ և բոլոր գարժարաններու համար որոշել մէկմէկ թիշչկ:

Կ. Պօլսոյ հայ թիշչկները սիրայօժար և անձնուիրաքար ստանձնեցին իրենց առաջարկուած պաշտօնը, և ահա Ազգ, վարժարաններու ընդհանուր առողջապահութիւնը, մանուկներու, մանկուհիներու մարմանյին առողջութիւնը շուտով սկսաւ, թշչկական ամենալուրջ և բարերար հսկողութեան առարկայ ըլլալ:

Պատրաստուեցան մասնաւոր Տեսքեր, որոնց մէջ մի առ մի կարձանագրուէին ամէն քարժարանի առողջապահական պահանջները, և այս ամի և առողջապահական պահանջները, և այս ամիթի զրի առ տեսակ մը Առողջապահական - Երջարեցական, զրո Ռւսումսական Խորհուրդն առանձին թերթերու վրայ տպագրել տալով ուղղեց բոլոր թաղական խորհուրդներու Ահաւասիկ այն.

Երջարեցական առ թաղական խորհուրդն Մայրադադիքին վասի աստղապահիկ կանոնաց կիրաւանն յազգային վարժարանն

Ազգային կեդրոնական Վարչութեան Ռւսումսական Խորհուրդս իւր Մարտ 22ի նստին մէջ տուած որոշմանը համաձայն՝ կը յանձնարարէ Պատ. Խորհրդոյդ.

1. Յանձնել Զեր գարժարանը Խորհրդոյս կողմանէ նշանակեալ թիշչկին՝ Տօթթ. . . . . որուն պաշտօնն է՝ շարաթական այցելութիւններով, վարել վարժարանի ընդհանուր առողջապահութիւնը, առանց սակայն մեծ ծախքի դոներ բանալու:

2. Կատարել անյապաղ ինչ որ թիշչկը կը պատուիրէ և վարժարանի առող-

ջապահական վիճակին կանոնաւորութիւնը կը պահանջէ:

3. Ռւսենալ յատուկ տումար մը, և անդ մի առ մի արձանագրել եղած և կատարուած թժշկական յանձնարարութիւնները, զորս Ռւսումսական Խորհուրդն հաւաքելով կը ծանօթացնէ հասարակութեան:

4. Հոգ տանիլ որ գարժարանիդ ներքին ընդհանուր մաքրութիւնն ինչպէս նաև ամեն դասաւանդութիւնները, ուսանողաց մտային գրադումները, զրօսանները, բարոյական վիճակը, մարմանարզական կը թուութիւնները և այլն, ըլլան միշտ թիշչկին առողջապահական հրահանգներուն համաձայն:

5. Զանալ, որ գարժարանիդ աշակերտներն ու աշակերտուէիներն առանց պատուաստի և հինցած պատուաստով չմնան, և առ այս թիշչկին զործը դիւրացնելու համար, միշտ պատրաստ ունենալ պատուաստի թարմ հեղուկը:

6. Օրէնք ընել, որ տարափոխիկ հիւանդութեամբ վարակեալ տուներէ եկող, ինչպէս նաև նորեկ աշակերտներն և աշակերտուէիները վարժարան չընդունուին առանց թժշկական արոտնագրի:

7. Ռւշաղիր ըլլալ, որ թեթեւոլիկ, մոլի, հիւանդու, անտարբեր, անկարող, և աշակերտները ծեծող ու շարաչար պատժող դասաւուները, վարժուէիներն և տընտեսները, իրրեւ խանգարիչ առողջապահական կանոններու ներզաշնակութեան, չի պաշտօնավարեն՝ առանց թժշկական ցննութեան և հրամանի:

8. Մասնաւոր խնամք և հոգածութիւն ունենալ աղքատ ուսանողին, և անթերի կատարել անոր առողջապահ վիճակին բարելաւութեանն համար որոշուած թժշկական որ և է յանձնարարութիւն:

9. Կապահէլ առողջապահութիւնը մանկավարժութեան ընդակից մէկ մասը, և այս սկզբամբ յանձնել վարժարանդ կարող և հմուտ Տեսչի մը ինսամց, որով թէ թաղ. Խորհրդոյդ պարտաւորութիւնները կը դիւրանան, և թէ թժշկական հրա-

հանգ կամ յանձնարարութիւն կունենայ  
յաջող արդիւնք:

ի Դիմաց Ռւսումնական Խորհրդոյ

Ատեմադպիր Ալբեմապիտ

Պ. Գ. ՔԵՐԵՍՏԵԼԱՆԱ ՏՕՐԹ. Վ. Յ. ԹՈՐՊԱՄԵԱՆ

18 Ապրիլ 1897

ՊԱՏԻՒՄԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Կ. Պոլիս

Բաւական տարիներ ամենայն կանոնաւորութեամբ շարունակեց վարժարաններու բժշկական հսկողութիւնը . բայց յետոյ դժբաղդաբար՝ մեր ամէն գործերուն պէս՝ այն ալ զաղբեցաւ. Կ. Պօլոյ Ազգ. Վարժարաններն այսօր զուրկ են բոլորովին բժշկական այցելութենէ , և հազիւ մէկ երկուցն ունին իրենց մասնաւոր բժիշկ:

Բ.

Ազմի Պաշտօնակիցներս,

Փետրվար 7 | 19ի նիստերնուս մէջ ,  
բերելով Զեկ պատասխանն այն առաջարկութեան , որով յանձնարարած էիր ինձ մայրաբաղացիս Ազգ. Վարժարաններու համար առողջապահական օրէնքներու հրահանգ մը պատրաստել , կը յայտնէի՝ թէ վարժարաններու առողջապահութեան համար Ռւսումնական Խորհուրդի կողմանէ գծուած հրահանգներ ո՞ր և է օգուտ մը չէին կրնար ունենալ . թէ՝ մեր վարժարաններն առողջապահական միօրինակ հրահանգներով վարել բնաւ կարելի չէ . թէ՝ վարժարաններն առողջապահական լաւ վիճակի մէջ պահելու համար հարկ անհրաժեշտ է , որ զանոնց ենթակայ ընենք բժշկական աշխատավայր կամ գերիշխանութիւն մը չէ , և ընդունէին՝ անոր ծոցէն ըլլիսած առողջապահական հրահանգները : Բժշկական պատշաճից օրէնքին հակառակ չվարուելու փափկանկատութեամբ , առաջարկեցի որ որոշէիր բժշկական Յանձնախումբ մը , որպէս զի այս մասին խորհրդակցութիւն մը կատարէի :

Բերած պատասխանս լսելէ յետոյ , Դուք հաճութեամբ ընդունեցիք բժշկական հսկողութեան մեծ կարևորութիւնը , բայց միանգամայն առաջարկեցիք , որ իմ բժշկական այցելութիւններուս պատասխութենէն բաղելով պատրաստեմ գարձեալ հրահանգներ , առաջնորդ ըլլալու և դիրութիւններ ընծայելու այն բժիշկներուն , որոնք պիտի ստանձնէին Ազգ. Վարժարաններու առողջապահութեան հօգը :

Կը յիշէք անշուշտ որ ես բնաւ համամիտ չգտնուեցայ այս առաջարկութեան , դիտել Զեկ տալով՝ թէ այդու փափուկ դիբբի մը մէջ կրնայի գտնուիլ , վիրաւորել ընտրելի արուեստակիցներուս դիրազգացութիւնը՝ իրաւամբ , և մինչև իսկ պատճառ գուցէ ըլլալ , մեծ պատասխանաւուութիւն մը հրահարելու Ռւսումնական Խորհուրդիս վրայ :

Ամէն բժիշկ տարրեր տարրեր գպրցներու աշակերտ , և հետեւապէս տարրեր գաղափարներով կրթուած . իրաւունք ունենալով տէր ըլլալ բժշկական ազատ կարձիքի և ազատ վարդապետութեան ու փորձառութեան , բնական է որ չուզէին համակերպիլ որոշածներուն Ռւսումնական Խորհուրդին , որ Բժշկական ատեան մը կամ գերիշխանութիւն մը չէ , և ընդունէին՝ անոր ծոցէն ըլլիսած առողջապահական հրահանգները : Բժշկական պատշաճից օրէնքին հակառակ չվարուելու փափկանկատութեամբ , առաջարկեցի որ որոշէիր բժշկական Յանձնախումբ մը , որպէս զի այս մասին խորհրդակցութիւն մը կատարէի :

Արդարացի գտնելով դիտողութիւններս , Խորհուրդս ընդունեց առաջարկս և անմիջապէս ընտրեց Յանձնախումբ մը՝ բաղկացեալ Տօրթ. Մատթէոսեան , Տօրթ. Ալմոնիք , և Տօրթ. Դակիթեան Բժշկներէ , որոնց հետ պարտաւոր էի խորհրդակցիւ

1. « Բիւզամդիում » Թիւ 106 8 մարտ 1897 (համառոտաթիւն Ատեմախոսութեանց ուսումնական խորհրդու) .

Ազգ. վարժարաններու առողջապահութիւնը կանոնաւորելու միջոցներու մասին:

Զարմանալի է՝ որ իմ այս առաջարկութիւնը և խորհուրդիս որոշումը տարբեր բացարձութեամբ մը ներկայացուեցաւ հրապարակի մէջ, և թժշկական թանձնախումբին պաշտօնն ալ այնպէս մը մեկնուեցաւ, իբրև թէ՝ «ես պատրաստած էի առողջապահական հրանաեցելիք, որք գործադրութեամբ յանձնարարուել առաջ, թժշկական թանձնախումբի մը յառաջ քննուրեան նորքն պիտի անցելին»: Խորհուրդիս մէջ կարդացած՝ որ հրատարակուեցաւ, գիտէք որ հրահանգ չէր, այլ թժշկական մէկ զործառութեանս մասին տեղեկութիւններ և անձնական տեսութիւններ, ուրով Զեր առաջարկութեան հակառակ կարծիք իսկ կը յայսնէի: Եթէ կողմանկից ըլլայի հրահանգներու պատրաստութեան, կարծեմ կարողութիւն, նա մանաւանդ միշտց չէր պակսեր ինձ պատրաստելու զանոնց այնպէս, որ հարկ չըլլար ապա կըրկին անգամ թժշկական թանձնախումբի մը «յատուի քննուրեան բովկէ անցնել»: Կրնայի մատենադարանիս հատորները խառնել պահ մը, և Պուշատափ, Ժիւլ Ռոշարի, Բուռատի, Լակրանժի և Գոլինոի պէս հսկայ առողջարաններու դպրոցական առողջապահութեան (իմին արօյն) վրայ գրած զործերէն քաղուածներ, (չըսկեմ զողութիւններ) ընել, և զանոնը Զեզի ներկայացուելէ առաջ ալ յշել մինչեւ Բարիզ, ինչպէս կը զբէր վերջերս Զմիւռնիոյ Արևելիան Մամուլլ, հոն իմ վարպետներու՝ Բօթէնի, Պուշատի, կամ Պուռատիլի նման Բօֆէսէոններու և աւակադեմական թժշկներու զօրաւոր զիտուղութիւններով սրբագրել, և այնպէս պատրաստ ունենալ առողջապահական հրահանգներու հաւաքածոյ մը, որ ամենէն ընտիրը, ամենէն կատարեալ կըլլար կարծեմ: Ես այսպիսի բան մը չըրի, որովհետեւ հակառակ էի և եմ առողջապահական հրահանգներու պատրաստութեան, որովհետեւ, զարձեալ կը կրնեմ, անձնական փորձառութեամբ զիտած էի, թէ

վարժարաններու առողջապահութիւնը պատերէ վար կախուած հրահանգներով չէր որ կը կանոնաւորուէր, այլ միայն և միայն թժշկի յարատե և խղճամիտ հսկողութեամբ: Իմ երկար զիտուղութիւններս լրացնէ յետոյ, երբ խորհուրդու կրկին անգամ խնդրեց որ պատրաստեմ հրահանգներ, այն ատեն պարտաւորեցայ, թէլադրուելով այն պատճառներէն՝ զորս յիշեցի արգէն, առաջարկել, որ թժշկական թանձնախումբի մըն ալ խորհրդակցութիւնն հրաւիրեմ այս մասին:

Ուրեմն՝ թժշկական թանձնախումբին հետ ունեցած խորհրդակցութեանս մասին է, որ կուզեմ այսօր տեղեկութիւն տալ ջեղ:

Թժշկական թանձնախումբը մէկ նիստ մը միայն ունեցաւ, գումարեցաւ իմ բնակարանս, փետրվար 12|24ի Չորեքշաբթի զիշերը: Ներկայ զոնուեցան Տօրթ. Մատթէոսեան, Տօրթ. Արմենօֆ, Տօրթ. Դափթիեան, և խորհուրդիս Ատենապիրը Պ. էֆ. Քէրսէսէնեան:

Հաղորդելով իրենց ինչ որ նախապէս կարգացած էի հոն, հարցումն ըրի, թէ՝ մեր վարժարաններու մէջ առողջապահական անհրաժեշտ կանոնները ճշդիւ զործագիւլու համար, հրահանգներով գրի առնել պէտք էր, իթէ ոչ թժշկներ կարգել: կամ թէ՝ վարժարաններու մէջ առողջապահութիւնը Ուսումնական խորհուրդին կորմանէ խմբագրուած հրահանգներով կարելի է կանոնաւորել, եթէ ոչ՝ թժշկական հսկողութեամբ:

Բնական է որ թերուղէմ զաղափարներ յայսնուեցան: սակայն այդու տեղի ունեցաւ խիստ շահեկան վիճարանութիւն մը, որուն յիշատակն երբէք չի պիտի մոռնամ, շնորհակալ միշտ մաւալով իմ սիրելի արուեստակից բարեկամներու, որոնց իրենց զիտական հմտութեամբ բարեհանձնեցան պատուել Ուսումնական խորհուրդիս հրաւիրը:

Առանց Զեզ պատմելու թժշկական թանձնախումբին այդ վիճարանութիւնը, որ երկար զրութեան մը նիւթ կրնայ ըլ-

լալ, բայ համարիմ կարգալ միայն նա-  
մակները մեծարոյ թժշկներուն, որոնք  
այդ զիշեր ո՞ր և է եղակացութեան  
չյանգնելով, և երկրորդ անգամ մըն ալ  
չկարենալով գումարուիլ, փութացին զրա-  
ւոր կերպով յայսնել իրենց անձնական  
տեսութիւնները:

Այս այդ նամակները նոյնութեամբ, և  
իրենց թուականներուն կարգաւ:

Թերա 25 փար. 2 մարտ 1897

Մեծ. Տօք. Թորգոմեամ էֆէնտի

Առաջապես զատ. Ռւսումմակամ նորմադոյ:

Կ. Պօլսոյ Ազգ. Վարժարաններու մէջ  
առողջապահական կանոններու ի գործ  
զրուելուն մասին Ուսումն. Խորհրդոյ ո-  
րոշումը ամէնցիս գոհունակութիւն պատ-  
ճառեց:

Պիտի խնդրեմ Ձեր Մեծապատուութե-  
նէն, հաճէիք շնորհակալութիւններս մա-  
տուցանել Պատ. Խորհրդոյ որ այդ մա-  
սին իմ կարծիքս ալ առնելու պատիւն  
ըրած էր ինծի:

Իրաց արդի կացութեանը մէջ, մանա-  
ւանդ շատ մը թաղերու անձուկ ու կրդ-  
զիացեալ վիճակի մը մէջ գտնուիլը մե-  
ծամեծ զժուարութիւններ պիտի յարու-  
ցանէ անշուշտ, առողջապահական շատ  
մը կանոններու կէտ առ կէտ գործադրո-  
մանը. այսու հանդերձ այդ արգելիները  
պատճառ մը չեն անշուշտ որ չջանացուի  
գէթ հիմակուհիմայ կարելին ընկլու:

Առ այդ իմ կարծիքս է, առ այժմ բո-  
լոր վարժարանները այցելու թժշկներու  
հակողութեանը տակ զնել և իրենց յանձ-  
նել պարտուատշանը տնօրինելու հոգը:

Ուսումնական Խորհուրդը ասով վար-  
ժարաններու առողջապահութեան ինդիքը  
ամրողովին լուծած չկրնար ըլլալ ան-  
շուշտ, բայց կարծեմ խնդրոյն կարեռը  
մէկ մասը գործադրուած կրնայ համարուիլ,  
թողով ապագային հիմնական ու ընդար-  
ձակօրէն պատրաստուած կանոններու կի-  
րառումը:

Ընդունեց՞ր յարգանքներս  
Տօք. Դահիթնեն

## ԹԱՐԱԿԱՆ ՏԵՍ

— օգոստոս —

ՆԵՐՄՈՒՏԵԼԻ ԴԵՂԵՐ

(Եար. Բար. էջ 223)

Prof. Jannelogue տեսնելով որ թու-  
աւոր զինքի ներմուծումներն կառողացը-  
նէին փոխի միքրոպէն յառաջ եկած հի-  
ւանդութիւնները՝ մարմնոյն ուրիշ մասե-  
րուն մէջ – ինչպէս ոսկրներու, ոսկրա-  
զօդերու մօտ – մտածեց նոյն դեղի ներ-  
մուծումներով թոքերու վէրքերուն առող-  
ջացումն ստանալ. տարակոյս չկայ թէ  
այս զեզը՝ քանի որ մարմնոյն ուրիշ տե-  
զուանը նոյն միքրոպէն յառաջ եկած ախ-  
տերը կը թժշկէր՝ պէտք էր նաև թոքախ-  
տը թժշկել. սակայն զդրաղդաբար մինչև  
այժմ եղած փորձերն ապարդիւն ելան.  
գիտնականներու մեծամասնութիւնը մեծ  
յոյս ունի ասոր վրայ և այժմ կ'ուսում-  
նասիրեն՝ զայն անվնաս թոքերուն հասցը-  
նելու կերպը:

Մանչէկերպի (iodoform) ներմուծում-  
ներն ալ կ'առողջացնեն նոյն միքրոպէն  
ուրիշ տեղուանք յառաջ եկած ախտերը.  
սակայն թոքերու վրայ եղած փորձերն  
ապարդիւն ելան: Սբառիան մանիշի նոր  
մէկ բաղադրութեամբ ներմուծումներ ընե-  
լով 86 հովոյ վրայ՝ 22 առողջացուցած  
է ու ինք թէ ըլուատոր զինքին ու թէ  
մանշակերպին վրայ մեծ յոյս ունի. բայց  
ըստ իրեն պէտք է գտնուի այն մարմնը  
որուն հետ միացնելով այս նիմիթերը՝ ընեն  
թոքերուն մէջ այն՝ ինչ որ կ'ընեն ուրիշ  
տեղ: — *Tubercoline.* — 1890ին փոխ  
կը հոչաչէր « Գերմանական թժշկական  
շարաթաթերթ »ին մէջ՝ թէ զտած էր թո-  
քախտին զեզը. թիշ ատենուան մէջ այս  
թոքը բոլոր աշխարհ տարածուեցաւ և  
ամէն կողմէն գովասանցներու հնեղեղ մը  
տեղաց գտնողին վրայ. ոչ ոք կրնար տա-  
րակուսիլ այն լուրին վրայ՝ քանի որ հը-  
շակողը փոխն էր, նոյն ինքն թոքախտի